ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/10 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«03» «հոկտեմբեր» 2022թ.,**
ժամը՝ 09:30

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի պետ՝
Սարգիս Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի գլխավոր ճարտարագետ՝ Սարգիս Հովհաննիսյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի ճարտարագետ՝ Մարիամ Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/10 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի հայտերի բացման նիստը կասեցվել և հարցում էր ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան տեղեկատվության ճշտման նպատակով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության «Ջի Ջի Կոնցեռն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

2.1 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Ջի Ջի Կոնցեռն ՍՊԸ»-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

2.1.1 գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ ծածկագիրը չի համապատասխանում հրավերի ծածկագրին, չափաբաժինները թերի են լրացված, ռուսերեն լեզվով անվանումը ռուսերեն չի լրացված և բացակայում է ստորագրությունը.

2.1.2 կազմակերպության անվանումը թերի է լրացված

2.1.3 կազմակերպության տնօրենի անունը թերի է լրացված

2.1.4 բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը

2.1.5 առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը լրացված չէ:

2.2 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած Գևորգ Սահաբալյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

2.2.1 գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը ռուսերեն չի լրացված.

2.2.2 առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը թերի է լրացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 2, դեմ-0

3. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել մասնակիցներին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 5-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Սարգիս Գրիգորյան	
Անդամ՝	Մարիամ Հայրապետյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	